

2765

Ս. ՇԶԵՐԲԱԿՈՎ,

ԼԵՆԻՆԻ ԳՈՐԾԸ ՀԱՂԹԵՑ

3K 26
G-90

ՊԵՏԶՐԱՑ

ԻԱԳՈՒԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՇԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

08 JUN 2005

3K26

6-80

4

Ա. Ս. ՇՉԵՐԲԱԿՈՎ

20 NOV 2009

ԼԵՆԻՆԻ ԳՈՐԾԸ ՀԱՂԹԵՑ

Ձեկուցում 1939 թվի հունվարի 21-ին Մեծ Թաղրոնում կայացած
սզո նիստում, նվերված Վ. Ի. Լենինի մահվան XV տարեդարձին

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

15 JUL 2013

2765



2141
39

А. С. ШЕРБАКОВ
ДЕЛО ЛЕНИНА ПОВЕДИЛО!

Госиздат—Издательство полит.
литературы, Ереван, 1930

Ընկերներ: Տասնհինգ տարի սրանից առաջ մեծ Լենինի
«իրտը դադարեց խփելուց: Մեռավ հեղափոխության հանձա-
րը,—նա, ով առանց ահի ու համարձակ կերպով հեղափո-
խությունից զեպի հեղափոխություն եր առաջնորդում ունե-
ւանվոր դասակարգը:

«Կուսակցությանը: Բոլոր աշխատավորներին» վերնա-
գրով ղեկավարի մեջ կուսակցության Կենտկոմը հաղորդում
էր:

«Մեռավ այն մարդը, վորի մարտական առաջ-
նորդությունը մեր կուսակցությունը, վոր վառուղի
ծխով եր պարուրված, տիրական ձեռքով Հոկտեմ-
բերի կարմիր դրոշմ կանգնեցրեց ամբողջ յերկրում,
սրբեց թշնամիների ղեկավարությունը, նախկին ցա-
րական Ռուսաստանում ամբապես հաստատեց աշխա-
տավորների տիրապետությունը: Մեռավ Կոմունիս-
տական Ինտերնացիոնալի հիմնադիրը, համաշխար-
հային կոմունիզմի առաջնորդը, միջազգային պրոլե-
տարիատի սերն ու պարծանքը, ճնշված Սրբեկների
դրոշմը, Ռուսաստանի բանվորական ղեկավարության
գլուխը»:

Լենինի մահը վողբաց մեր ամբողջ աշխատավորական
յերկիրը:

Աշխատավորների և ճնշվածների վողջ աշխարհը սուգ
մտավ:

Մի սամարացի հասարակ դյուղացի ամբողջ աշխատա-
վոր ժողովրդի վիշտը արտահայտեց հետևյալ բառերով.
«Յեթե կարելի լիներ յերկրագունդը պատել «Լենին» մական-

գրությամբ թերթիկներն աշխարհի քանակով, վորքան այդ անունն արտասանվել է վերջին որերում, այդ թերթիկները կծածկեյին բոլոր ծովերն ու ովկիանոսները, մայր ցամաքներն ու թափուաները, և բոլորը կլինե՛ր՝ Լենին... Լենին»...

Լենինի մահը խնդրությամբ ու հույսով լցրեց բոլշևիզմի թշնամիների սրտերը:

Կուսակցության ներսում բոլոր նրանք, ովքեր Լենինի կենդանության ժամանակ ել քանիցս փորձել են ներսից դրոհել կուսակցության դեմ, թիկունքից գնդակոծել նրան, տատանել նրա շարքերը, — բոլոր հակամարքսիստները, հակալենինյանները, բոլոր նրանք, ովքեր, ինչպես հետո դուրս յեկավ, ոտարեկրյա հետախուզությունների առաջադրանքով ջանում էյին կործանել կուսակցությունն ու խորհրդային պետությունը, — նրանք նոր հույսով դուրս բարձրացրին:

Թշնամիներն իրենց հաշիվներն մեջ սխալվեցին: Առաջնորդի մահը չառատանց կուսակցության շարքերը: Խորհրդային յերկրի բանվոր դասակարգը Լենինի մահին պատասխանեց նրանով, վոր ե՛լ ամելի համախմբվեց կոմունիստական կուսակցության շուրջը և իր լավագույն գավակներից ամելի քան 20 հազար հոգի նրա շարքերն ուղարկեց:

Թշնամիները սխալվեցին իրենց հաշիվներում, վորովհետև կուսակցությունը, Խորհրդային Միության բանվորները և աշխատավորները, համաշխարհային պրոլետարիատը — իրենց շարքերից առաջ քաշեցին Լենինի արժանավոր հաջորդին, նրան,

ով Լենինի հետ մեկտեղ է կառուցել կուսակցությունը և ամրապնդել նրա շարքերի միասնությունը,

ով յերբեք չի նահանջել Լենինից,

ով Լենինի հետ մեկտեղ է ղեկավարել բանվոր դատակարգի պայքարն ու հաղթությունները Հոկտեմբերին ու քաղաքացիական պատերազմում,

ով Լենինի հետ մեկտեղ է մշակել մեր յերկրի բարե-

փոխման պլանը և հետագա տարիներում իրականացրել այդ պլանը:

Թշնամիները սխալվեցին իրենց հաշիվներում, վորովհետև կուսակցության, յերկրի ու հեղափոխության գլուխ կանդնեց Լենինի գործի մեծ շարունակող՝ ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ):

I

Մահը Լենինին խլեց մեր շարքերից այն ժամանակ, յերբ կուսակցությունը և յերկիրը շատ բարդ ու դժվարին իրադրություն էյին ապրում:

Ինչպես դուք հիշում եք, դրանից շատ քիչ առաջ յերկրում ավարտվեց քաղաքացիական պատերազմը:

Վրանդելը ջախջախվել եր 1920 թվի վերջերին: Լեհաստանի հետ կնքած հաշտությունը ռատիֆիկացիայի յեր յենթարկվել 1921 թվի ապրիլին: Այսպես կոչված կարելյան ավանտյուրան լիկվիդացիայի յեր յենթարկվել 1922 թվի սկզբներին: Կարմիր բանակի զորքերը յապոնական ինտերվենտներին դուրս էյին չպրտել խորհրդային հողից ու Վլադիվոստոկը վերցրել 1922 թվի հոկտեմբերին:

Քաղաքացիական պատերազմում հաղթությունը հեշտ չեր ձեռք բերվել ռուսական սպիտակ-դավարդիականության նկատմամբ, իմպերիալիստական ինտերվենցիայի նկատմամբ: Այդ հաղթությունն ամբողջ յերկրից պահանջեց դերմարդկային ջանքեր, եկոնոմիկայի մեծագույն լարում, անվերապահ հերոսություն և զոհեր՝ պրոլետարիատի կողմից: Խորհրդային յերկիրը պատերազմից դուրս յեկավ թուլացած:

«Միայն պատերազմը վերջնապես հետո մենք տեսանք, թե ինչ աստիճանի յե հասել քայքայումն ու աղքատությունը, վորոնք յերկար ժամանակով մեզ դատապարտում են վերքերի միայն պարզ բուժման», — ասում եր Լենինը:

Նոյն արդյունաբերության արտադրանքը 1920 թվին համարյա յոթ անգամ պակաս էր նախապատերազմյանից: Չուգունի ձուլումը, նախապատերազմյան ժամանակի հետ համեմատած, 1921 թվին կազմում էր մոտ 3 տոկոս, հանքաքարի հանույթը ընկել էր մինչև 1,7 տոկոսը, պղնձինը— մինչև 0-ն: Ֆաբրիկաների մեծ մասը և տրանսպորտը կործանված էին, շախտաները վողողված:

Գյուղացիական տնտեսությունը կատաստրոֆիկ չափերով կրճատել էր ցանքերը և կուլտուրաների բերքահավաքը:

Գյուղին արդյունաբերական ապրանքներ մատակարարելը համարյա դադարել էր, քաղաքի տնտեսական կապերը գյուղի հետ ծայրահեղորեն թուլացել էին:

Այն ժամանակ կուսակցության առաջ դրված խնդիրը հանգում էր այն բանին, վոր պետք է գյուղացիական տնտեսությունը վերականգնել, առանց վորի չէր կարելի յերեակայել արդյունաբերության վոչ մի վերականգնում, անկարելի յեր կարգի բերել ու ամրացնել պրոլետարիատի շարքերը, սանձահարել մանր-բուրժուական տարրերը:

Կուսակցության առաջ դժագրվում էր գյուղատնտեսության վերականգնման միակ ուղին—այդ՝ վորոչ սահմաններում չըջանառության ազատություն, մանր տնտեսատիրոջ համար ազատություն թույլատրելու ուղին էր:

Կուսակցությունը այդ արեց,—պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելով, ավելցուկների նկատմամբ ազատ տնորինելու իրավունք վերադասելով գյուղացուն:

Գյուղը տնտեսությունը զարգացնելու խթան ստացավ: Նոր տնտեսական քաղաքականությունը, վորի ուղին վոտք դրեց մեր կուսակցությունն այդ տարիներում, շուտով ցույց տվեց իր առաջին դրական արդյունքները և ամրոդվությամբ ու լիովին արդարացրեց իրեն:

Ժողովրդական տնտեսության վերականգնումը, վոր սկսվեց ՆԵՊ-ը մտցնելով, ընթանում էր արագ տեմպերով,—վերականգնվում էր արդյունաբերությունը, վերականգնվում էր գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության վերականգնման համեմատ՝ ընթանում էր բանվոր դասակարգի աճման ու կոնսոլիդացիայի պրոցեսը:

Միջակը, վորպես դյուղի կենտրոնական ֆիգուրա, ել ավելի ամրացավ: Դրա կոդքին տեղի յեր ունենում կապիտալիստական տարրերի աճումը քաղաքում և մասնավանդ դյուղում: Դասակարգերի հարաբերակցության մեջ ստեղծվեց նոր դրություն: Որակարգի մեջ մտավ մի նոր հարց— ո՞վ ավելի շուտ կուտվի նոր դրությունից՝ սոցիալիստական, թե կապիտալիստական տարրերը, ո՞ւմ հետեից կդնա գյուղացիությունը՝ սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի հետեից, թե կապիտալիստների հետեից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր 1923 թվին մասնավոր կապիտալի տեսակարար կշիռը առետրի մեջ կազմում էր 50 տոկոսից ավելի, իսկ հատավաճառ ապրանքաշրջանառության մեջ նա հասնում էր մինչև 80 տոկոսի:

Յերկրում դոյացած դրությունը Լենինը ձևակերպել է այսպիսի խոսքերով.

«Ո՞վ կհաղթի—կապիտալիստը, քե խորիքային իշխանությունը... Ամրոդը հարցն այս է—ո՞վ ումից առաջ կանցնի: Յեթե կապիտալիստները կարողանան ավելի շուտ կազմակերպվել—այն ժամանակ նրանք կոմունիստներին կվոնգեն, ու այստեղ ել վոչ մի խոսակցություն լինել չի կարող: Այս բաներին պետք է դրսոտ նայել—ո՞վ ում»: (Լենին, հատոր XXVII, էջ 41—42):

Ահա թե ինչպես կտրո՞ւկ էր դնում հարցն ընկեր Լենինը:

Ամեն կերպ զարգացնելով սոցիալիզմը, կուսակցությունը թույլատրեց կապիտալիզմի վորոչ աչխուժացում, նա հաստատապես նկատի ուներ կապիտալիստական և սոցիալիստական տարրերի միջև սկսված մրցակցության մեջ կազմակերպել սոցիալիստական սիստեմի դերակշռությունը կապիտալիստականի նկատմամբ և ջանալ հասնելու կապիտալիստական տարրերի լիկվիդացիային:

Սոցիալիստական շինարարության ամբողջ հետադա-
րորձն ամբողջովին արդարացրեց այդ քաղաքականու-
թյունը:

Յեւ չհենց վոր հաջողվեց ժողովրդական տնտեսության
վերականգնման գործում ձեռք բերել առաջին հաջողու-
թյունները,—կուսակցության առաջ ամբողջ ուժով ծառա-
ցավ հետադա զարգացման հեռանկարներին ու բնույթի հար-
ցը:

Այն հարցերը, թե վորո՞նք են սոցիալիզմի բախան ու
հեռանկարները խորհրդային Միության մեջ, վորոնք այն
տարիներում պրակտիկ կերպով ծառացան կուսակցության
և բանվոր դասակարգի առաջ, «ՀամԿ(բ)Կ պատմության
համառոտ դասընթացի» մեջ ձևակերպված են այսպես.

«Խոչ ուղղությամբ պետք է տանել տնտեսական
շինարարությունը խորհրդային Միության մեջ, սո-
ցիալիզմի ուղղությամբ, թե՞ մի վորևէ այլ ուղղու-
թյամբ: Արդյոք սոցիալիստական տնտեսություն
մենք պե՞տք է կառուցենք և կարո՞ղ ենք կառուցել.
Թե՞ մեզ վիճակված է հողը պարարտացնել մեկ ու-
րիշ, կապիտալիստական տնտեսության համար: Ընդ-
հանրապես հնարավո՞ր է արդյոք խՍՀՄ-ում սոցիա-
լիստական տնտեսություն կառուցել, իսկ յեթե հնա-
րավոր է, ապա հնարավո՞ր է արդյոք այդ տնտեսու-
թյունը կառուցել՝ կապիտալիստական ցերկրներում
հեղափոխության ձգձգվելու և կապիտալիզմի ստարի-
լիզացիայի պայմաններում: Հնարավո՞ր է արդյոք
սոցիալիստական տնտեսությունը կառուցել նոր տըն-
տեսական քաղաքականություն ուղիների վրա, մի
քաղաքականություն, վորն ըստամենայնի ամրա-
պնդելով ու ծավալելով սոցիալիզմի ուժերը յերկ-
րում, դրա հետ մեկտեղ առայժմ տալիս է կապիտա-
լիզմի նաև վորոշ աճում: Ինչպե՞ս պետք է կառուցել
սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը,
վոր ծայրից պետք է սկսել այդ շինարարությունը»:

Այս բոլոր հարցերին կուսակցությունը պատասխանել

է, այդ բոլոր հարցերը լուծել է և համաշխարհային պատ-
մական հաջողություններ է ձեռք բերել՝ մեր յերկրում սո-
ցիալիզմ կառուցելու վերաբերյալ լենինյան-ստալինյան
պլանը կատարելու հիման վրա,—մի պլան, վորը բովան-
դակում էր այսպիսի մոմենտներ.

1. Հղոր սոցիալիստական ինդուստրիայի ստեղծումը
երկտրիֆիկացիայի, վորպես ամբողջ ժողովրդական տնտե-
սության վերակառուցման բաղաչի, հիման վրա:

2. Սկզբում ավելի պարզ ձևեր—գյուղացիական տնտե-
սությունների կոոպերացումն առավելապես վաճառահան-
ման բնագավառում,—իսկ այնուհետև անցում կոոպերացման
բարձրագույն ձևերին—կոլեկտիվացման՝ գյուղատնտեսու-
թյունը նորագույն գյուղատնտեսական տեխնիկայով հագե-
ցնելու հիման վրա:

II

Լենինն ու Ստալինը մեր յերկրի բարեփոխման պլանը
նշելուն ձեռնամուխ ելին յեղել դեռևս ամենաանողոր քա-
ղաքացիական պատերազմի տարիներին: Միայն նրանք—
մտքի այդ տիտանները, հանճարեղ կանխատեսներն ելին,—
վոր քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի
ֆրոնտների, բյուկազայի, քաջբայման, սովի ու ցրտի միջով
կարողանում ելին վոչ միայն տեսնել վաղվա ոլոր, այլև
նախապատրաստել այն:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունից ան-
միջապես հետո Լենինը բազմիցս մատնանշում էր, վոր սո-
ցիալիզմի հաղթությունը հնարավոր է միայն ամբողջ յերկ-
րի երկտրիֆիկացման հիման վրա:

Դեռևս 1918 թվին Լենինը պահանջում էր «հատուկ ու-
շադրություն դարձնել արդյունաբերության ու տրանսպոր-
տի երկտրիֆիկացման և ելեկտրականությունը հողագոր-
ծության նկատմամբ գործադրելու վրա» (Հատոր XXII, էջ
434):

«Պարենհարկի մասին» բրոշյուրի պլանի մեջ Լենինը
գրում է.

«Յերե մի 10—20 տարուց հետո ելեկտրիֆիկացիա չե, մազաշափ անդամ ուրստիելի չե մանր հողագործի ինդիվիդուալիզմը և նրա ազատ առևտուրը տեղական շրջանառութեան մեջ: Յերե ելեկտրիֆիկացիա չե՝ միևնույն ե, անխուսափելի չե գարձը դեպի կապիտալիզմ»: (Լենին, հատոր XXVI, էջ 313):

Լենինի առաջարկութեամբ կառավարութեանն ստեղծեց Ռուսաստանի ելեկտրիֆիկացման պետական հանձնաժողով—**ГОЭЛРО**. յերկու հարյուր գիտնական, ինժեներ ու տեխնիկ ձևանամուխ յեզան ելեկտրիֆիկացման պլանը կազմելուն: Լենինի և Ստալինի կողմից մշտապես փոփոխվելով, հանձնաժողովը մշակեց ելեկտրիֆիկացիայի պլանը, և նա իրապես հանդիսացավ խորհրդային հանրապետութեան միասնական ժողովրդատնտեսական պլանը:

«Կամուկովմը՝ խորհրդային իշխանութեանն և պլանային ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացիան»,—այսպես առաջնապետ չափով սեղմ ու պարզ ձևով ձևակերպեց Լենինը կուսակցութեան գլխավոր խնդիրը:

Ըստ Լենինի և Ստալինի մտահղացման այդ պլանը հասկացվում էր վոչ թե փոքրէական մեկուսի կառուցված առանձին ելեկտրակայաններ, այլ փոքրէական յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսութեան, այդ թվում և՛ գյուղատնտեսութեան փոխադրումը նոր, ժամանակակից տեխնիկայի բազայի վրա: Հենց այդ նպատակով Լենինն այդ պլանն անվանեց «կուսակցութեան յերկրորդ ծրագիր»:

ГОЭЛРО-ի պլանի շուրջը կատաղի պայքար ծավալվեց. կուսակցութեան և բանվոր դատակարգի բոլոր թշնամիները ծառացան այդ պլանի դեմ:

Կուսակցութեան ներսում ելեկտրիֆիկացիայի պլանի դեմ դուրս յեկան տրոցկիները, սիկովները և նրանց ձայնարկուները: Նրանք արգելակում էին, սարսուռած յենթարկում ու փոխեցում ելեկտրիֆիկացիայի պլանը:

Ընկեր Ստալինը՝ Լենինի հետ մեկտեղ պայքարում է **ГОЭЛРО**-ի պլանի բոլոր թշնամիներին դեմ, ջախջախիչ հարվածներ է հասցնում պրոդետարիատի ուժերին չհամա-

տալուն և մենչեիկյան-տրոցկիստական տարրերի կապիտալիստութեանը:

Ձի կարելի առանց հուզմունքի կարդալ Ստալինի նամակը Լենինին (1921 թվի մարտ) ելեկտրիֆիկացիայի պլանի մասին.

«Հիանալի, լավ կազմված գիրք է: Իսկապես միասնական և իսկապես պետական տնտեսական՝ առանց չակետների՝ պլանի հմտալից ուղղագիր: Տնտեսապես հետամնաց Ռուսաստանի խորհրդային վերնաշենքի տակ այժմյան պայմաններում իսկապես ռեալ և տեխնիկապես միակ հնարավոր արտադրական բազան քաշելու միակ մարքսիստական փորձը մեր ժամանակում: Հիշում եք Տրոցկու անցյալ տարվա «պլանը» (նրա թեղիսները)՝ մինչպատերազմական արդյունաբերութեան բեկորների նկատմամբ անորակ գյուղացիական-բանվորական մասսայի (աշխատանքի բանակի) աշխատանքը մասսայաբար կիրառելու հիման վրա Ռուսաստանը «տնտեսապես վերածնելու» մասին: **ГОЭЛРО**-ի պլանի հետ համեմատած՝ վորպիսի՝ աղքատամտութեան, վորպիսի՝ հետամնացութեան: Միջնադարյան տնայնագործ, վոր իրեն յերեվակայում է իրենյան հերոս, վորը կոչված է Ռուսաստանը «փրկելու» հնադարյան սաղայով... Իսկ ինչ արժեն—տասնյակ «միասնական պլանները», վորոնք՝ համոթ մեր՝ չարունակ յերևան են գալիս մեր մամուլում, —նախապատրաստականցիների մանկական թոթովանք... կամ թե՛ ոբիվատեւական «ռեալիզմը» (իբրք մանկավարչական) Ռիկովի, վորը դեռ էլի «քնննադատում է» **ГОЭЛРО**-ն և մինչև ակնջները խրված և ուռալիսայի մեջ»...

Ելեկտրիֆիկացիայի Լենինյան-Ստալինյան պլանը հաղթեց: **ГОЭЛРО**-ի համարձակ պլանը ստալինյան հնգամյակների հետեանքով գերազանցվել է:

Ելեկտրակայանների կառուցման և ելեկտրոեներգիայի արտադրման պլանը բաղժապատիկորեն գերակատարվել է:

ԳՕՅԼՐՕ-ի պլանով յենթադրվում էր կառուցել 30 նոր ռադիոակնային ելեկտրակայան: Նշանակալից չափով ավելի շատ ռադիոակնային ելեկտրակայան է կառուցվել:

1938 թվին արտադրվել է 36½ միլիարդ կիլովատ-ժամ էներգիա:

Ելեկտրոէներգիայի արտադրությամբ մեր յերկիրը 1923 թվին տասնիններորդ տեղն էր զբաղում մյուս յերկրներին շարքում: 1937 թվին նա զբաղում էր յերրորդ տեղը: (Ծափահարություններ):

III

Հայտնի յե, վոր ժողովրդական տնտեսության հիմք ու վողնաշար հանդիսանում է ծանր արդյունաբերությունը:

Ինդուստրացման և ծանր արդյունաբերության գերի մասին Լենինն այսպես էր գրում.

«Ռուսաստանի համար փրկություն է վո՛չ միայն դյուղացիական տնտեսության լավ բերքը,—այդ դեռ քիչ է,—ու վո՛չ էլ միայն լավ կացությունը թեթե արդյունաբերության, վորը դյուղացիությանը սպառման առարկաներ է մատակարարում,—այդ էլ դեռ քիչ է,—մեղ անհրաժեշտ է նաև ծանր ինդուստրիան: Իսկ վերջինս լավ կացության հասցնելու համար շատ տարիների աշխատանք կպահանջվի:

Ծանր ինդուստրիան պետական սուբսիդիաների կարիք ունի: Յեթե մենք այդ սուբսիդիաները չճարենք, ապա մենք, վորպես քաղաքակրթված պետություն,—եւ յես չեմ ասում՝ վորպես սոցիալիստական պետություն,—կորած ենք»: (Լենին, Հ. XXVII, էջ 349):

Ահա՛ թե ինչպես կտրո՞ւկ էր դնում հարցն ընկեր Լենինը:

Յուրաքանչյուր հասարակակարգ ծագում է վորոշ դասակարգի ֆինանսական աջակցությամբ միայն: Մեր կար-

գերի—սոցիալիստականի—ստեղծման, ամրապնդման ու ընդարձակման համար նույնպես ֆինանսական աջակցություն էր հարկավոր բանվոր դասակարգի և նրա դաշնակցի՝ գյուղացիության կողմից:

Ծանր արդյունաբերություն ստեղծելու համար միլիարդներ էյին հարկավոր: Տասնվեց տարի սրանից առաջ ծանր արդյունաբերության համար յերկիրն ի վիճակի յեր հատկացնելու ընդամենը 20 միլիոն վոսկի ռուբլի, և այն ժամանակ Լենինն այդ դեպքը դիտում էր վորպես առաջին լուրջ հաղթություն, վորի մասին նա անհրաժեշտ էր համարում զեկուցել Կոմինտերնի IV կոնգրեսում:

Կապիտալիզմի ռեստավրացիայի իդեոլոգները տեսնում էյին արդյունաբերության վերականգնման ու ռեկոնստրուկցիայի մեկ ճանապարհ,—դա՛ ռտարերկրյա կապիտալի ներգրավումն է: Ռտարերկրյա բանկիրները համարում էյին, վոր Ռուսաստանը սեփական ուժերով յուր չի դնա ու միենույն է խոնարհաբար խնդրելու կզնա նրանց՝ բանկիրներին մոտ: Ռտարերկրյա կապիտալիստների մոտ խոնարհաբար խնդրելու և նրանց առաջ դուրս խոնարհելու առաջարկն անում էյին տրոցկիստները, բուխարինականները, ռիկովականները, գինովյեվականները:

Այդ ուղին նշանակում էր յերկրի ստրկացում, նրա վերածումը Յեվրոպայի արդյունաբերության ագրարային լրացման, Խորհուրդների յերկրի ինքնուրույնության կորուստ, նրա վերածումն իմպերիալիզմի գաղութի:

Կուսակցությունը դնաց ինդուստրացման լենինյան ստալինյան ուղիով և հասավ այն բանին, վոր տասնվեց տարի սրանից առաջ արդյունաբերության մեջ դրված 20 միլիոն ռուբլու փոխարեն, առաջին հնգամյակի տարիներում,—վորը, ինչպես հայտնի յե, կատարվեց 4 տարի և 3 ամսում,—սոցիալիստական տնտեսության մեջ դրեց 50½ միլիարդ ռուբլի, յերկրորդ հնգամյակի տարիներում—137 միլիարդ ռուբլուց ավելի և միմիայն 1938 թվին—35

միլիարդ ռուբլի: Այս ներդրումների առյուծի բաժինը հաս-
կացվեց ծանր ինդուստրիային:

Յեւ արդեն խոսել եմ արդյունաբերութեան այն որերի
մակարդակի մասին, յերբ կուսակցութեանն անցնում եր
ՆԵՊ-ին: Բայց ահա թե իրենից ինչ եր ներկայացնում ծանր
արդյունաբերութեանը 1923 թվին: Այդ տարում արտա-
դրվեց 300 հազար տոնն չուգուն, 600 հազար տոնն պող-
պատ, 500 հազար տոնն պրոկատ: 1923 թվին յերկրում վո՛չ
տրակտոր, վո՛չ ավտոմոբիլ չարտադրվեց: Ասում են, վոր
1924 թվին հաջողվել է հավաքել մասամբ հին, մասամբ ել
նոր՝ արտասահմանյան, վոչ-մեր մասերից, 10 հատ ավտո-
մոբիլ և 10 հատ տրակտոր:

1938 թվին մեր արդյունաբերութեանն արտադրել է մոտ
15 միլիոն տոնն չուգուն՝ 300 հազարի փոխարեն, 18 միլիոն
տոնն պողպատ՝ 600 հազարի փոխարեն, մոտ 13½ միլիոն
տոնն պրոկատ՝ 500 հազարի փոխարեն, նա արտադրել է
մոտ 50 հազար տրակտոր, 200 հազար ավտոմոբիլից ավելի,
23 հազար կոմբայն:

Արտադրութեան շատ տեսակներում մենք հասել ենք
տեխնիկայիս առաջավոր կապիտալիստական յերկրներին:
Այն տարիներին ընթացքում մենք նոր ենք կառուցել արդյու-
նաբերութեան ամբողջ նոր ճյուղեր, վորպիսիք առաջ չկա-
յին:

Վորքան ել վոր դրանդիող, վորքան ել վոր խիզախ եր
ԳՕՅԼՐՕ-ի սլանն այն որերի համար, յերբ նա մշակվում
եր, բայց նա ել չկարողացալ հաշվի առնել այն բոլոր
հնարավորութեանները, վոր իր մեջ կրում է խորհրդային
սիստեմը: ԳՕՅԼՐՕ-ի սլանով յենթադրվում եր, վոր ար-
դյունաբերական պրոդուկցիայի արտադրութեանը 10—15
տարվա ընթացքում կգերազանցի մինչպատերազմյան մա-
կարդակը յերկու անգամ: 1937 թվին, այսինքն ԳՕՅԼՐՕ-ի
սլանն ընդունելուց 16 տարի հետո, արդյունաբերութեան
մակարդակը՝ նախապատերազմյանի հետ համեմատած՝ ավե-
լացել եր վո՛չ թե յերկու անգամ, ասլ ավելի քան յոթ ան-

գամ: Խոշոր արդյունաբերութեան արտադրանքը 1938 թվին
աճել եր՝ 1923 թվի հետ համեմատած՝ քսան յերկու—քսան
յերեք անգամ:

Որերս հրապարակվեցին այն տվյալները, վորոնք վերա-
բերում են ԽՍՀՄ արդյունաբերութեան արտադրանքի աճ-
մանը 1938 թվին: Մինչդեռ կապիտալիզմի յերկրներում ար-
դյունաբերական արտադրութեանը 1938 թվին՝ 1937 թվի
հետ համեմատած՝ նվազել է 13,5 տոկոսով, արդյունաբե-
րական արտադրութեանը ԽՍՀՄ-ում աճել է 12 տոկոսով:
Այս թվերը վկայում են սոցիալիստական ինդուստրիայի
մատահ ու հոյր վերելքի մասին, կրկին և կրկին անգամ
վկայում են սոցիալիստական սիստեմի գերազանց լինելը
կապիտալիստականից:

Սա յե այն ճանապարհը, վոր այս տարիներին ընթաց-
քում խորհրդային արդյունաբերութեանն անցել է մեր կու-
սակցութեան ղեկավարութեամբ, ընկեր Ստալինի ղեկավա-
րութեամբ: (Բուռն ծափահարություններ):

IV

Մեր կուսակցութեանը հսկայական հաղթանակ է տա-
րել դյուղատնտեսութեան մեջ:

Ի՞նչ եր ներկայացնում իրենից դյուղացիութեանը:

Այդ—մանր արտադրողների դասակարգ եր, վոր ցրված
եր յերկրի յերեսին, չահագործվում եր կարվածատերերի,
կուլակների, սպեկուլանտների, վաշխառուների կողմից:
Գյուղացին, մասնավոր սեփականութեան այդ ստրուկը, հա-
րյուրավոր տարիներ այդպես է ապրել:

Համաշխարհային գրականութեան մեջ ինչքան զարմա-
նալի ու վառ եջեր կան, վորոնք ցույց են տալիս դյուղա-
ցիների ստրկական, կախյալ դրութեանը՝ հանդեպ իրենց հո-
ղակտորի, յերբ այդ հողակտորն ստանալու հետևից ընկնե-
լով, մարդիկ հաճախ կորցնում էին ամեն մի մարդկային
կերպարանք:

Բաժական է միայն վերհիշել այսպես կոչված բաժանը-

ները, վորոնք նկարագրված են ուռւ գրականութեան մեջ, յերբ հաճախ բանն այնտեղն եր հասնում, վոր խորհիթը սղոցում էյին, գերան առ գերան քանդում, թե՛ «թող վո՛չ ինձ բաժին ընկնի, վո՛չ քեզ»,—և յերբ հաճախ բաժանքը վերջանում եր արյունահեղութեամբ, մարդասպանութեամբ,—վորդին կացնի հարվածով հորն եր սպանում, յեղբայրները բրերով հարձակվում էյին միմյանց վրա, և այդ ամենը կատարվում եր հանուն մասնավոր սեփականութեան, վորի գինն ել հաճախ կոպեկ եր լինում:

«Հողը» վեպում Ֆրանսական գրող Զոլան նկարագրում է յերկու քույրերի՝ Լիզայի ու Ֆրանսուազայի կյանքը: Նրանք ապրում էյին հաշտ, խաղաղ, սիրում ու հարգում էյին իրար: Բայց ահա ձեռնարկում են հողամասի բաժանքին, ու քույրերը կատաղի գազաններ են դառնում: Բանը վերջանում է նրանով, վոր քույրերից մեկը գերանդիով մորթում է մյուսին՝ հղին,—մորթում է, վորպեսզի վո՛չնչացնի վո՛չ միայն նրան՝ իր քրոջը,—այլև ապագա մանկանը—ժառանգին, վորպեսզի ինքը տիրանա հողի կտորին: Յեւ այսպիսի բան կատարվել է ու կատարվում է այն բոլոր տեղերում, վորտեղ մասնավոր սեփականութեան թաթը բռնել է մարդկանց կոկորդը:

Ուրեմն խորհրդային իշխանութեան ինչպիսի հեղաշրջում պետք է կատարեր գյուղացիութեան գիտակցութեան մեջ, վորպեսզի կործաներ, քարը քարի վրա չթողներ մարդկանց կողմից իրար նկատմամբ ցույց տրվող այդպիսի հարաբերութեանները,—հարաբերութեաններ, վորոնք բնորոշվում են՝ «մարդը մարդու համար գայլ է» բառերով:

Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, վոր կապիտալիզմի որով գյուղատնտեսութեանը զարգանում է նույն որենքների համաձայն, ինչ և արդյունաբերութեանը, ուստի և գյուղատնտեսութեան մեջ կապիտալիստական ձեերին սոցիալիստականի հաջորդելու անխուսափելիությունը թելադրում են նույն որենքները, ինչ և արդյունաբերութեան մեջ:

Ի հակադրութեան մարքսիստական-լենինյան թեորիա-

յին, բուրժուական և մանր-բուրժուական «թեորետիկները» պնդում էյին, վոր մանր հողագործութեանն իրեն վո՛չ միայն փառ չի հայտարարում խոշորի հանդեպ, այլև առավելութեաններ ունի վերջինիս հանդեպ: Շնորհիվ այդ առավելութեանների, վորոնց եյութեանն իրր թե՛ այն է, վոր մանր գյուղացին համբերատար է, տոկուն, վոր նա պատրաստ է կրելու ամեն տեսակ զրկանքներ, միայն թե իր ձեռքին պահի իր հողակտորը, խոշոր տնտեսութեանը վո՛չ միայն դուրս չի մղում մանրին, այլև, ընդհակառակը, մանրը նոր դիրքեր է գրավում, վորի հետևանքով հողագործութեան մեջ բացակայում է կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսը, բացակայում է գյուղատնտեսական պրոլետարիատի գոյանալու պրոցեսը, բացակայում է դասակարգային հակասութեանների և դասակարգային պայքարի աճումը:

Այսպես է մանր հողագործութեան «կայունութեան» թեորիան, վորի դեմ Լենինն ու Ստալինը յերկար տարիներ պայքար են մղել, վորը լայն տարածում է ունեցել և արտացոլում է դտեւ, որինակ, II Ինտերնացիոնալի համարյա բոլոր կուսակցութեանների ծրագրերի մեջ:

«Կայունութեան» թեորիան բուրժուազիայի շահերի թելադրանքն է: Կապիտալիզմի ջատագովները, ձգտելով կանխել մասնավոր սեփականութեան կործանումը, կռուում էյին պարանքին, ծղոտին: Նրանք ձգտում էյին ապացուցել, վոր սոցիալիզմն անխուսափելիորեն կանգ կառնի մանր գյուղատնտեսութեան չեմքի առաջ:

Ամենահազթ սոցիալիզմի առաջ մանր գյուղատնտեսական արտադրութեան «կայուն լինելու» դադափարիկը փոխադրվեց և՛ խորհրդային հողի վրա ու առաջադրվում եր վորպես փաստարկ ընդդեմ խոշոր սոցիալիստական գյուղատնտեսութեան:

Վորպես մանր անհատական գյուղատնտեսութեան «կայունութեան» թեորիայի պաշտպաններ ու կոբեկտիվացման թշնամիներ հանդես էյին դալիս՝ կոնքրետայնական-չայա-

214/39

նույնականները կուլակային հակահեղափոխական կլիկը, մեն-
չեիկյան հակահեղափոխական կլիկը, աջերի ու տրոցկիստ-
ների հակահեղափոխական բանդան:

Կուլակցութունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ
նրանց բոլորին ջախջախեց: (Ծափահարություններ):

Ի՞նչ էր ներկայացնում գյուղատնտեսությունն այն
սրերին, յերբ ընկեր Լենինը մեղինից՝ հեռացավ: Այդ մանր-
ապրանքային մանրատված գյուղացիական տնտեսություն-
ների մի ովկիանոս էր: Այն ժամանակ խոռը անգամ չկար
կոլտնտեսությունների դերը, գյուղատնտեսության մեջ
նրանց ունեցած տեսակարար կշռի մասին: Գյուղատնտե-
սության մեջ կուլակությունը նկատելի դեր էր խաղում:
Մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունն ինքը
աննշարար միջավայր էր կապիտալիստական տարրերի հա-
մար:

Յեվ այստեղ դարձյալ ոչտակար է վերհիշել, թե ինչ
էր առում ընկեր Լենինը: Իսկ նա առում էր հետևյալը.

«Քանի դեռ մենք ապրում ենք մանր-գյուղացիա-
կան յերկրում, կապիտալիզմի համար Ռուսաս-
տանում ավելի հաստատուն տնտեսական բազա կա,
քան կոմունիզմի համար»: (Լենին, հատոր XXVI, էջ
46):

Մեկ ուրիշ տեղ Լենինը գրում է.

«10—20 տարիների ճիշտ հարաբերակցություններ
գյուղացիության հետ, և ապահովված է հաղթու-
թյունը համալսարհային մոսշտաբոդ (նույնիսկ այն
դեպքում, յեթե ձգձգվեն պրոլետարական հեղափոխու-
թյունները, վորոնք աճում են), այլապես՝ օպիտակ-
գվարդիական տեուրի 20—40 տարվա տանջանքներ»:
(Լենին, հատոր XXVI, էջ 313):

Ահա՛ թե ինչպես կարող էր դնում հարցն ընկեր Լե-
նինը: Կամ մենք խոշոր մեքենացրած սոցիալիստական
կոլեկտիվ գյուղատնտեսություն կկառուցենք—կամ կկոր-
ծանվենք:

Կոլեկտիվացման պատմական անխուսափելիությունը
թեյադրվում էր և՛ նրանով, վոր մանր անհատական գյու-
ղացիական տնտեսությունը, վորը հետագայում էլ շարու-
նակում էր բաժանվել ու մանրատվել, սակավ ապրանքային,
կիսասպառողական էր և իր մասսայով վոչ միայն ընդլայն-
ված վերարտադրությունը չէր իրականացնում, այլև նույն-
իսկ պարզ վերարտադրությունն իրականացնում էր վո՛չ-
միշտ:

1927 թվին գյուղացիական տնտեսությունն ապրանքա-
յին հաց տվեց իր արտադրանքի ամբողջ դուժարի ընդամե-
նը 11,2 տոկոսի չափով: Հացի արտադրության աճումը
սուր հակասության մեջ էր գտնվում կարիքների աճման
հետ: Ուղղակի սպառնալիքի տակ էր դրված քաղաքի, Կար-
միր բանակի և այլոց մատակարարումը:

Ընկեր Ստալինը հարցը դրեց ամենայն կտրուկությամբ:
Նա առում էր.

«Կարելի՞ յե արդյոք շատ թե քիչ յերկարատե
ժամանակաշրջանի ընթացքում խորհրդային իշխանու-
թյունը և սոցիալիստական շինարարությունը խաբըս-
խել յերկու տարբեր հիմքերի վրա—ամենախոշոր ու
միավորված սոցիալիստական արդյունաբերության
հիմքի վրա և ամենամանրատված ու հետամնաց մանր-
ապրանքային գյուղացիական տնտեսության հիմքի
վրա: Վո՛չ, չի՛ կարելի: Դա յերբեւե պետք է վերջա-
նա ամբողջ ժողովրդական տնտեսության լիակատար
փուլոգումով»: (Ստալին, «Ագրարային քաղաքակա-
նության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում»):

Ահա՛ թե ինչպես կտրուկ է դրել հարցն ընկեր Ստա-
լինը:

Բուն գյուղացու անմիջական շահերը նույնպես մղում
էին նրան դեպի խոշորացրած տնտեսության ուղին: Մանր-
ապրանքային, կիսասպառողական, մանր տնտեսությունը մի
կողմից չէր ապահովում արդյունաբերության աճող պա-
հանջները, մյուս կողմից—բուն գյուղացուն դատապարտում

եր կիսամուրացիկային դորշ կյանքի: Հարկավոր եր յեւթ
այդ դրութիւնից: Յեւթն այս եր—կամ վոտք զնեւ տնտե-
սութեան խոշորացման, արտադրողականութեան ու ապրան-
քայնութեան բարձրացման սոցիալիստական ուղին՝ կոլտըն-
տեսութիւններէ միջոցով, կամ վոտք զնեւ կապիտալիստա-
կան խոշորացման ուղին:

Կուլակութեան հովանավորներն ու պաշտպանները—
տրոցկիստներն ու բուխարինականները գյուղացիներին կան-
չում եյին զնալ յերկրորդ ուղիով, վորպէս յեւթ դրութիւն-
նից՝ առաջարկում եյին կուլակային տնտեսութեան ծաւա-
լումը: Բայց այդ ուղին նշանակում եր հողի անցում մի-
ջակներէ՝ կուլակներին, գյուղացիութեան հիմնական մաս-
սաների քայքայում, աշխատավոր մասսաների դատապար-
տում սովի ու աղքատութեան, — այս ուղին նշանակում եր
կապիտալիզմի ռեստավրացիա:

Գյուղացիութիւնը, վորին ղեկավարում եր բանվոր
դասակարգն ու կուսակցութիւնը, մերժեց այդ անհայտ
կապիտալիստութիւնը կուլակութեան ու միջազգային
բուրժուազիայի առաջ:

Գյուղացին մատերիալիստ ե: Նա հասկացաւ, վոր կու-
սակցութիւնը, առաջարկելով նրան վոտք զնեւ կոլտնտեսա-
յին սոցիալիստական աշխատանքի ուղին, նրան ունեւոր ու
կուլտուրական կյանք ապահովելու իրական հնարավորու-
թիւն ե տալիս: Այսպիսով կենսական տնտեսական անհրա-
ժեշտութիւնը գյուղացուն թելադրում եր կոլտնտեսութեան
անցնել:

Կար մի յեւթ—համատարած կոլեկտիւացումը և այդ
բազայի վրա կուլակութեան՝ վորպէս դասակարգի՝ լիկվի-
դացիան: Հենց այս միակ ճիշտ ճանապարհով ել տարաւ
յերկիրն ընկեր Ստալինը:

Մանր գյուղացիական տնտեսութիւնից խոշորին, կո-
լեկտիւայինին անցնելը հեշտացաւ նրանով, վոր մեզ մոտ
իր ժամանակին իրականացւել եր հողի ազգայնացումը, վո-
րը գյուղացուն ազատում եր իր հողակտորին ստրկորեն
նվիրված լինելուց:

Իսկ հիմա ի՞նչ դրութիւն ե տիրում գյուղատնտեսու-
թեան մեջ: Մենք լուծել ենք համաշխարհային-պատմական
խնդիրը, — այժմ մանր գյուղացիական մանրատված տնտե-
սութիւնների ուղիւնոս ել չկա: Մանր անհատական գյու-
ղացիական տնտեսութեան «կայունութեան» ռեստավրատո-
րական ջնջին թեւորիւնների փոշին քամուն ենք տվել: Հի-
մա մենք ունենք կոլտնտեսութիւններ ու խորհրդային տնտե-
սութիւններ, — խոշոր սոցիալիստական ձեռնարկութիւններ՝
նորագոյն գյուղատնտեսական տեխնիկայի հիմքի վրա:

Միջնադարականութեան, խղճուկ տեխնիկայի, ցածր
կուլտուրայի ռելսերից յերկիրը փոխադրված ե ժամանակա-
կից ինդուստրիայի ու խոշոր մեխանիզացիայի յենթարկված
գյուղատնտեսութեան ռելսերի վրա: 250 հազար կոլտնտե-
սութիւն, 6·344 մեքենատրակտորային կայան, նրանց մեջ
4741½ հազար տրակտոր, 150 հազար կոմբայն, 170 հազարից
ավելի ավտոմոբիլ, հարյուր—հազարավոր տրակտորային
գութան, տրակտորային սերմեցան դործիք, կուլտիւ-
տոր, բարդ կալիչ և այլն—ահա սոցիալիստական հողա-
գործութեան բազան: Այս բարդ ու բազմատեսակ տեխնի-
կան ղեկավարում են խորհրդային իշխանութեան »ովորեց-
րած ու դաստիարակած կադրերը:

Գյուղացիութիւնը վոտք ե դրել կոլտնտեսային ռենւոր
կյանքի ուղին, փորձով համոզվել ե, վոր կոլտնտեսութիւն-
ներն ոգտակար են, և այժմ վո՛չ մի ուժ գյուղացիութեան
այդ ուղուց չի շեղի:

Սրանից 45 տարի առաջ «Ի՞նչ են «Ժողովրդի բարեկամ-
ները» և ինչպէս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատ-
ների դեմ» դրքում Լենինը պատմութեան մեջ առաջին ան-
գամ առաջ քաշեց բանվորների և գյուղացիների հեղափո-
խական դաշինքի իդեան:

Լենինի այդ իդեան թափանցում ե բոլշևիկների կու-
սակցութեան պաքարի ամբողջ պատմութիւնը՝ այդ պայ-
քարի բոլոր ետապներում:

Ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց բոլոր ուժերով ամ-
բացնելու բանվորների և գյուղացիների դաշինքը:

Այն, ինչ կատարվեց մեր յերկրում հետագա տարիներում—ընկեր Լենինի մահից հետո,—այն է՝ համատարած կոլեկտիվացման բաղադրված կուլակուլությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու լողունների իրականացումը, —հենց այդ եր, վոր նշանակում եր բանվորների և գյուղացիների դաշինքի անխախտությունը վերաբերյալ հարցի ամենալավագույն լուծում:

Այդ լողունների իրականացումը նշանակում եր այնպիսի խորագույն հեղափոխական հեղաշրջում, վորը «իր հետեանքներով» համանշանակ և «1917 թվի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը»: («Համկ(բ)Կ պատմություն համառոտ դասընթաց»):

Լուծված ե մի խնդիր, վոր բանվոր դասակարգի կողմից իշխանությունը նվաճելուց հետո ամենադժվարին և ամենաբարդ խնդիրն ե: Խորհրդային գյուղացիությունը վերջնականապես և անդառնալիորեն վրա ե դրել կոլտնտեսային աշխատանքի ուղին ու դարձել ե սոցիալիստական շինարարություն ակտիվ ուժը:

Այս ե այն ճանապարհը, վոր անցել ե մեր խորհրդային գյուղատնտեսությունը մեր կուսակցության ղեկավարությամբ, ընկեր Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն ծափաբուրյուններ):

V

Հարկավոր ե խոսել ելի մեկ հարցի մասին: Լենինն ասում եր.

«Աշխատանքի արտադրողականությունը, այդ, վերջին հաշիվով, ամենակարևորը, ամենազխալորն ե նոր հասարակարգի հաղթության համար: Կապիտալիզմը ստեղծեց աշխատանքի արտադրողականություն, վորպիսին տեսնված չեր ճորտատիրության որով: Կապիտալիզմը կարող ե վերջնականապես հաղթվել և վերջնականապես կհաղթվի նրանով, վոր սոցիալիզմն ստեղծում ե աշխատանքի նոր, շատ ավել-

ի բարձր արտադրողականություն»: (Լենին, հատոր XXIV, էջ 342):

Ներկայումս մենք մասնակիցներն ենք հանդիսանում աշխատանքի բարձր սոցիալիստական արտադրողականության համար մղվող պայքարի մի նոր ետապի, վորը դերսկորվել և ստանալու է շարժման մեջ: 1919 թվին, քայքայման ու սովի պայմաններում, Մոսկվա—Կազան յերկաթուղում տեղի ունեցած առաջին կոմունիստական շարաթորյալի մեջ Լենինը տեսնում եր համաշխարհային—պատմական նշանակություն ունեցող դեպք, աշխատանքի նկատմամբ այնպիսի վերաբերմունքի արտահայտություն, վորը սոցիալիզմն անհաղթելի յե դարձնում:
